ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 422-Ա

«18» ապրիլի 2024 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ ՄԱՐՄԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 51-ՐԴ ՓՈՂՈՑ 13 ՀԱՍՑԵԻ 08-078-0067-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Արտակ Գրիգորի Սարգսյանը (ծնված 15/07/1980 թվական) դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ ժառանգության իրավունքով (հիմք ժառանգության վկայագրեր 604-20240409-84-7846731) իրենց ընտանիքին բաժնային սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մարմաշեն գյուղի, 51-րդ փողոց, 13 հասցեի, 0,249766 հեկտար մակերեսով, 08-078-0067-0003 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա առկա ինքնակամ կառուցված շինությունները օրինական ճանաչելու խնդրանքով:

Բաժնային սեփականության իրավունքով Լիդա Ավետիքի, Արտակ և Արթուր Գրիգորի Սարգսյաններին պատկանող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մարմաշեն գյուղի, 51-րդ փողոց, 13 հասցեի հողամասի վրա գտնվող, ինքնակամ կառուցված 93.19 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը, բաց պատշգամբը, նկուղը և շվաքարանը կառուցվել են 2017 թվականից 2020 թվականը (2001 թվականի մայիսի 15-ից հետո): Ինքնակամ կառույցները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառույցները հաշվառված են Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2024TG6VMV ծածկագրով:

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի թիվ 14-Ն որոշման 2-րդ կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն

որոշման 1-ին կետի դրույթներով, համաձայն նույն որոշման կարգի 8-րդ 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերի և 13-րդ կետի և ա) և բ) ենթակետերի, 18-րդ կետի դ) ենթակետի պահանջների, ինչպես նաև հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցների (Գգ) սահմանված չափը՝ որը Մարմաշեն գյուղի (Շիրակի մարզ, 16-րդ գոտի) համար 0,0874 է և հիմք ընդունելով Արտակ Գրիգորի Սարգսյանի դիմումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մարմաշեն գյուղի, 51-րդ փողոց, 13 հասցեի հողամասի վրա գտնվող, ինքնակամ կառուցված 93.19 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը, նկուղը, և շվաքարանը, ինչպես նաև ինքնակամ բացված թվով երկու պատուհանները, բացված թվով մեկ դուռը և փակված թվով մեկ դուռը ճանաչել օրինական սահմանված վճարների դիմաց:
2. Սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված բնակելի նշանակության շինությունների յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի, ինչպես նաև ինքնակամ բացված թվով երկու պատուհանների, բացված թվով մեկ դռան և փակված թվով մեկ դռան օրինականացման համար սահմանել 10000 դրամ, իսկ օժանդակ շինությունների համար 6000 դրամ և կիրառել շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության 0,0874 գործակիցը:
3. Շինությունների օրինականացման ինչպես նաև ինքնակամ բացված թվով երկու պատուհանների, բացված թվով մեկ դռան և փակված թվով մեկ դռան համար հաշվարկված ընդհանուր վճարը կազմում է 80427 (ութսուն հազար չորս հարյուր քսանյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:
4. Սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հաշված, 60 օրյա ժամկետում, օրինականացման համար սույն որոշման 3-րդ կետով սահմանված գումարը չվճարելու դեպքում՝ որոշումն համարվում է ուժը կորցրած:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անշարժ գույքի բաժնային սեփականատերերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
6. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԶԱՎԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

«18» ապրիլի 2024 թվական
գյուղ Ախուրյան